Բ. անգամ ՊԿ. 1908 ին. և նոյն տարին կ'ընտրուի կթղ. ամենայն Հայոց (1908— ✻ 1910)։ Վարած է ուսուցչական, քարոզչական և Ազգ. վարչական պաշտօններ։ 1881 ին հրատարակած է Հայրապետութիւն Հայաստանեայց Առաքելական Ս. Եկեղեցւոյ եւ Աղթամար եւ Սիս խորագրով երկասիրութիւնը. 1872 ին և 1883 ին հրատարակուած Ազգ. վարժարանաց քարեկարգութեան հրահանգը ինչպէս նաև Կաթողիկոսական Ցանձնաժողովոյ Տեղեկագիրը իր խմբագրութիւններն են։ Իր լիակատար կենսագրութիւնը և իր կրթ. ուղեւորութիւնը Կ. Պոլսեն ի Ս. Էջմիածին. տեսնել (Արարատ. 1909 և 1910)։

ՄԱՏԹԷՈՍ ԿԹՂ. ՍՍՈՅ ԿԵՍԱՐԱՑԻ (Սարը). — Մբ. Կեսարիոյ Ս. Կարապետ վանքին. ՊԿ. 1692 ին. կթղ. Սսոյ (1694 — 1701). կաթողիկոսութենէ հրաժարելով Պոլիս կուգայ և 1706ին Ս. Յակոբի վանքին պատրիարքութիւնը ապօրէն կերպով կը վարէ քանի մը ամիսներ միայն։ Մատթէոս կթղ. պաշտպանեալն էր Գաղղիոյ դեսպան Ֆէրիոլին և հակառակորդն Աւետիք պտրք.ին։ Մատթէոս Սարը՝ իր հակազգային ընթացքին պատճառաւ կը բանտարկուի եւ հաւատուրացութեամբ կ'ազատի գլխատումէ, յետոյ կը փախչի Հռովմ ուր կը վախճանի։

ՄԱՏԹԷՈՍ ԿՐՕՆԱՒՈՐ, ԴԱՐԱՆԱՂՑԻ. — Մբ. 1192 թուին Գրիգոր Տղայ կաթողիկոսին օրով։ Մաշկեւոր վանքին մէջ Վարդան վրդ.ի ձեռքով ընդօրինակուած երկաթագիր Ճաշոց մը Ս. Հրեշտակապետաց եկեղեցւոյն մէջ քրքրուած վիճակի մէջ տեսնելով՝ Հայոց ՉԿԷ (=1318) թուականին կը կազմէ զայն քանի մը ուրիշ գրեանց հետ և կը գրէ յիշատակարան մը, որուն սկզբի մասը ջնջուած է, բայց կը հասկցուի թէ ինքը երեք տարիէ ի վեր Երուսաղէմ կը գտնուի, հայրենեօք դարանաղցի է և կը յիշէ Ս. Հրեշտակապետաց վանքին մէջ գիրքը կազմած ըլլալուն թուականը։

ՄԱՏԹԷՈՍ ԿՐՕՆԱՒՈՐ. — Մբ. 1551ին Ս. Յարութեան տաճարին մէջ կ'ընդօրինակէ Աստեւաբանութիւն եւ խորհրդածութիւնք Ներսիսի Լամբրոնացոյ ձեռագիրը (ՄՁ. Թ. 146), և կը գրէ հետեւեալ յիշատակարանը. «... Արդ՝ այսմ անմահական ըմպելոյ և անգին մարգարտիս և ամենագով աւրինակիս ցանկացաւղ և փափաքող եղեալ երջանիկ և շնորհազարդ առաջնորդ սբ.